* *
*

Եղբայրութեան կամ թէ սիրոյ
Խօսքը ես ձեզ չեմ քարոզում.—
Պատգամները չարի, բարւոյ
Ձեր ոտների տակն եմ նետում.

Կեանքն է պայքա՛ր՝ գո՛ռ ու դաժա՛ն,
Ճզմի՛ր մարդուն և թռի՛ր վե՛ր.
Իրաւունքը ո՛ւժն է միա՛յն.
Վա՜յ յաղթուածին, հազա՜ր վայեր։
Տէր կամ ստրուկ պիտի լի՛նիս—
Ճշմարտութի՛ւն չը կայ ուրիշ։

Ձես սպանիլ, քեզ կը սպանեն.
Դուն սպանիր, քեզ չսպանեն.
Լուծ կամ լծկան պիտի լի՛նիս—
Ճշմարտութի՛ւն չը կայ ուրիշ։

Անիծուի՛ս, մարդ, որ յո՛յսդ է մարդ.
Բախտդ կռուով կռի՛ր ինքդ.
Մո՛ւրճ կամ զնդա՛ն պիտի լի՛նիս—
Ճշմարտութի՛ւն չը կայ ուրիշ…

Ա. Իսահակեան